ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 364 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 806-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում փախստականների հարցերով էստոնական խորհրդի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 08265234) «Ֆրիներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 07620452) 2025 թվականի մայիսի 21-ին կնքված՝ N 3 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 10,29 հզորությամբ երեք արևային համակարգի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 6,540,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի նոյեմբերի 12-ի Հայաստանի Հանրապետությունում փախստականների հարցերով էստոնական խորհրդի մասնաճյուղի կողմից իրականացվող «Հիդրոպոնիկ ջերմատների կառուցում» ծրագրի մասին» N 806-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

10.06.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ